Հասմիկ Ստեփանի Այվազյան

Ծնվել է 1983 թվականի օգոստոսի 2-ին, Վանաձոր քաղաքում:

2000թ. ավարտել է Վանաձորի թիվ 20 միջնակարգ դպրոցը:

2000-2004թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ստացել իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան:

2004-2006թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, ստացել իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

01.06.2004-25.12.2005թթ. աշխատել է «Ֆրիգեյթ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

31.01.2006-19.07.2006թթ. աշխատել է Վանաձորի քաղաքապետարանի գույքի կառավարման, եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ-իրավաբան:

19.07.2006-08.02.2007թթ. աշխատել է Տնտեսական դատարանում:

14.02.2008-01.03.2013թթ. աշխատել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

23.12.2007թ. նրան շնորհվել է Դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

01.03.2013-01.12.2022թթ. աշխատել է Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնում՝ որպես բաժնի պետ:

01.12.2002թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի Դատավորներին և թեկնածուներին առնչվող վարչության Դատավորների և թեկնածուների առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Կորյուն Վլադիմիրի Գրիգորյան

Ծնվել է 1984 թվականի օգոստոսի 13-ին, Սյունիքի մարզի Տաթև գյուղում:

2001թ. ավարտել է Երևանի Սիամանթոյի անվան թիվ 162 միջնակարգ դպրոցը:

2007թ. ավարտել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետը:

2014թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան:

2019թ. ավարտել է Մ. Մաշտոցի անվան համալսարանը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

17.01.2012-14.08.2012թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

03.09.2012-26.10.2012թթ. աշխատել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.11.2012-01.09.2017թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

01.09.2017-02.03.2020թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում՝ որպես դատավորի ավագ օգնական:

Դատական դեպարտամենտի ղեկավարի 02.03.2020թ. թիվ 181-Ա հրամանով ազատվել է դատավորի օգնականի պաշտոնից և նշանակվել դատավորի օգնականի պետական հայեցողական պաշտոնում:

06.11.2012թ.նրան շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, 01.09.2017թ.-ին՝ Դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, իսկ 29.10.2018թ.-ին՝ Դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

Տիրապետում է հայերեն (գերազանց), անգլերեն (բավ) և ռուսերեն (լավ) լեզուներին:

Վահե Մայիսի Հախվերդյան

Ծնվել է 1985 թվականի փետրվարի 17-ին, Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղում:

2001թ. ավարտել է Իջևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2008թ. ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետը՝ ստացել պատմություն (իրավունքի հիմունքներ) մանկավարժության բակալավրի աստիճան:

2003-2005թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ Մատաղիսի զորամասում, մասնակցել մարտական հերթապահությանը:

2008-2010թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում և ստացել մագիստրոսի աստիճան:

01.01.2012-26.11.2012թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ:

30.11.2012թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Շնորհվել է Դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

30.05.2019-08.06.2019թթ. Վերաքննիչ վարչական դատարանի կողմից գործուղվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, անցել սեմինար-դասընթացներ Շփայերի Կառավարման գիտությունների գերմանական համալսարանում, մասնակցել «Վարչական գործընթացը Հայաստանում և Գերմանիայում համեմատության մեջ» գերմանահայկական կոլոկվիումին, ինչպես նաև ներկա է գտնվել դատական նիստերի Կարլսրուեի վարչական դատարանում և Գերմանիայի դաշնային վարչական դատարանում (Լայպցիգ):

Հեղինակ է հետևյալ գիտական հոդվածների՝ «Քաղաքացիական ծառայողների իրավական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Երևան «Անտարես» հրատ., N5/166 2013թ. մայիս, էջ 22-32, «ՀՀ քաղաքացիական ծառայության կառավարման իրավական կարգավորման հիմնախնդիրները», «Արդարադատություն» գիտական հանդես: N3(22), 2013թ.սեպտեմբեր, էջ 26-32, «ՀՀ քաղաքացիական ծառայության կազմակերպման սկզբունքները, «Вестник» РАУ:N2/2013, 2013թ. էջ 72-81,. «Քաղաքացիական ծառայությունը ՀՀ պետական կառավարման համակարգում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Երևան: «Անտարես» հրատ. N10-11/172-173 2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 18-29: Տիրապետում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին:

Ունի մեկ դուստր:

Մարիաննա Սարգսի Բաղինյան

Ծնվել է 1991 թվականի դեկտեմբերի 21-ին, Երևան քաղաքում:

1999-2009թթ. սովորել և ավարտել է Երևան քաղաքի Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 միջնակարգ դպրոցը:

2009-2013թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ստացել իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան:

2013-2016թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, ստացել իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

09.06.2015-05.10.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտում՝ որպես կազմակերպահիրավական վարչության կրտսեր մասնագետ:

05.10.2015-01.11.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.11.2018-08.10.2019թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության Բարձրագույն դատական խորհրդի նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

08.10.2019-13.09.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության Բարձրագույն դատական խորհրդի նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

13.09.2021թ.-ից առ այսօր աշխատում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունում՝ որպես վարչության պետ:

10.06.2022թ.ստացել է «CEELI INSTITUTE.Advancing the rule of law»-ի կողմից տրված հավաստագիր՝ «Պաշտոնեական կոռուպցիայի նախաքննություն և քրեական հետապնդում» դասընթացը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ: 26.07.2022թ. ստացել է «Բիզնես միջզգային ակադեմիա»-ի կողմից տրված հավաստագիր՝ «Աշխատանքային-տեխնիկական հմտություններ», «Կառավարման և առաջնորդության հմտություններ» վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ:

ԵՄ աջակցությամբ «Թվիննինգ» ծրագրի շրջանակներում 09.09.2023թ. ստացել է «dbb akademie»-ի կողմից տրված հավաստագիր՝ «Վերապատրաստողների վերապատրաստում (TOT)», 3-րդ մոդուլը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ՝ պրոֆեսիոնալ վերապատրաստողի որակավորմամբ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Արգիշտի Արթուրի Մեսրոպյան

Ծնվել է 1997 թվականի օգոստոսի 3-ին, Կոտայքի մարզի Զովունի գյուղում:
2014թ. ավարտել է Կոտայքի մարզի Զովունու Ռ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցը:

2014-2020թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2022թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

29.01.2016-29.01.2018թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

17.08.2020թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: